

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112098246, 2012052555, 2012040412 և 2012003375 որոշումների հիմքերում դրված փաստական հանգամանքների դեմ բերված գանգատն առանց բավարարման թողնելու մասին

<< 07 >> 07 2021թ. 7-13 1548

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Հայկ Խաչատրյանի ՄԴ/9376-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Երևան քաղաքի Էրեբունի փողոցի 113 տան բնակիչ Հայկ Խաչատրյանը դիմումով խնդրել է բեկանել <<NISSAN>> մակնիշի 01PT002 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցով կատարված երթևեկության կանոնների խախտումների համար կայացված Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2011933057, 2011881505, 2112098246, 2012052555, 2012040412 և 2012003375 որոշումները՝ նշելով, որ իրավախախտումները կատարել է ծառայողական անհրաժեշտությունից ելնելով՝ կապված պատերազմի հետ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 286-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայկ Խաչատրյանը ճանաչվել է որպես իրավախախտումները կատարած անձ, ուստի նրա կողմից ներկայացված գանգատը ենթակա է քննության:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112098246, 2012052555, 2012040412 և 2012003375 որոշումներն ենթակա են կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը**, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ վարչական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, որը թեև սույն օրենսգրքով կամ վարչական իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն սահմանող այլ նորմատիվ ակտերով նախատեսված գործողություն է կատարել, սակայն գործել է ծայրահեղ անհրաժեշտության վիճակում, այսինքն՝ մի այնպիսի վտանգ վերացնելու համար, որը սպառնացել է պետական կամ հասարակական կարգին, սոցիալիստական սեփականությանը, քաղաքացիների իրավունքներին ու ազատություններին, կառավարման սահմանված կարգին, եթե այդ վտանգը տվյալ հանգամանքներում չէր կարելի վերացնել այլ միջոցներով և եթե հասցված վնասը կանխված վնասի համեմատությամբ ավելի նվազ կարևորություն ունի:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի համատեքստում, երբ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ անձի վրա:

Վարչական վարույթի ընթացքում ստեղծված նյութերի ուսումնասիրությամբ չի հիմնավորվել դիմումատուի կողմից ճանապարհային երթևեկության կանոնների խախտումները ծայրահեղ անհրաժեշտության վիճակում կատարելու հանգամանքը ապացույցների բացակայության պատճառով, հետևաբար վիճարկվող որոշումները ենթակա չեն բեկանման:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Ինչ վերաբերվում է Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2011933057 և 2011881505 որոշումներին, ապա դիմումատուի կողմից բաց է թողնվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 288-րդ հոդվածով նախատեսված՝ վերը նշված որոշումների դեմ գանգատ տալու 30-օրյա ժամկետը, ուստի դիմումը դրանց մասով քննարկման ենթակա չէ:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 286-րդ հոդվածի 1-ին մասով և 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2112098246, 2012052555, 2012040412 և 2012003375 որոշումների հիմքերում դրված փաստական հանգամանքների դեմ բերած գանգատը թողնել առանց բավարարման:
2. Հանձնարարել ՏՄՀԻՎԳԲ բաժնին, Հայկ Խաչատրյանի անվամբ կայացնել նոր վարչական ակտեր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
4. Սույն որոշման օրինակն ուղարկել Հայկ Խաչատրյանին և ՃՈ ՏՄՀԻՎԳԲ բաժնին:

